

ՄԱՐՏԻՐՈՍ ԵՊՍ.—Մբ. նախագէս միաբան Ս. Էջմիածնի, ՆԸ. Հնդկաց. ուխտաւորութեամբ Ս. Յակոբայ վանքին այցելութիւն տալով կը միաբանակցի. 1773ին կը ճամբորդէ Թէրալիզի վանքերը վերին Եզրիպոսի մէջ: Շարագրած է վարդապետական կոնդակներ և ունի 41 հատ համառօտ քարոզներ զանազան նիւթերու վրայ գրուած ՌՄԻ (=1771) թուականին: Սոյն ձեռագիրներուն անթուական մէկ օրինակը կը գտնուի Ս. Յակոբի վանքը (ՄՁ. Թ. 1007). բաց աստի Նիկոսիոյ (Կիպրոս) Ս. Աստուածածին եկեղեցիին մատենադարանը ունի ձեռագիր *sawar* մը, որուն յիշատակարանէն կը հասկցուի թէ՛ Մարտիրոս եպս. սկսած և ընդօրինակած է զայն Ս. Յակոբի վանքին մէջ և աւարտած է զայն Թերալիզի մէջ: Հոս կը գնենք նոյն յիշատակարանին կարեւոր մասը, որ միւսնոյն ժամանակ կը մանրամասնէ Մարտիրոս եպիսկոպոսի կենսագրութիւնը. «...արդ յարմարեալ գրքուկս այս (տաղարան) յաստուծոյ պարգեւադրական շնորհացն և ի կարողութենէ լուսափայլ և առատահոս ձրիական խնամոցն նորին. շարագրականաւ վաստակոյ Մարտիրոս եպիսկոպոսի, որ նախագէս Մշոյ Մրքոյ Կարապետի շնորհաբաշխ և հոյակապ յաթոռն *liosaw* ի դպրութեան հասակին յառաջնորդութեան տեառն Մինասի գերյարգոյի և արհիականի՝ ակնցոյ. ուստի զկնի ի սուրբ Էջմիածին կաթողիկոս: Իսկ երկրորդաբար ի սուրբ Էջմիածին յաթոռն գերահոջակ և լուսափառ, սրովբէագումար և երկնասարաս մօրն հաւատոյ և հիմանն լուսոյ փառաց գմբէթայարկի միաբան և եպիսկոպոս եւ ծայրագոյն նուիրակ ի Հնգրսակ գաւառ ի տեառնէ Ղազար գերընտիր և շնորհագարդ քրիստոսապսակ կաթողիկոսէ Զահկեցոյ: Եւ երրորդաբար յԵրուսաղիմ առ Սուրբ Յակոբն յաթոռն համասփիւռ և լուսածաւալ առ յոյսն հանրականի. յակն փառաց ամենայն հաւատացելոց, քրիստոնէից միաբան եւ ծառայ յամենայն կեանս, յորում զգլըքուկ յարմարեալ յաստուծոյ պարգեւացն տեառն Թէոդորոսի Մշոյ Խորենացոյ...»:

Իր ընդօրինակած Տաղարանին համար ալ կը գրէ. «արդ աւարտեցաւ ի թուականութեանս ՌՄԻԳ (=1774) յերկիրն Աւետեաց ի սուրբ Երուսաղէմ. յակն ճաճանչափայլ և համասփիւռ և հոտաւէտ վարդենին. ի փրկարանս հոգւոց. համայն հաւատացելոց յաղթող գահն Աստուծոյ ի սուրբ Յակոբ տեառն»: